ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԱՆ ԿԱՐՈՅԻ ԼՈՒԿԱՍ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (XVII – XIX ԴԱՐԵՐ)

ԺԸ.00.01 - «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն»
մասնագիտությամբ
արվեստագիտության թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2019

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

АРМАН КАРОЕВИЧ ЛУКАС

АРХИТЕКТУРА ОСОБНЯКОВ НОВОЙ ДЖУЛЬФЫ (XVII – XIX ВЕКА)

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени
кандидата искусствоведения по специальности
18.00.01 – “Архитектура и архитектурный дизайн”**

ЕРЕВАН - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր
Քերթմենջյան Դավիթ Գրիգորի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հասրաթյան Մուրադ Մարգարի

ճարտարապետության թեկնածու
Կիրակոսյան Լյուբա Վլադիմիրի

Առաջատար կազմակերպություն՝ Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2019թ. մարտի 14-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 016 Արվեստագիտության մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր **Ասատրյան Ա. Գ.**

Тема диссертации утверждена в Институте искусств НАН РА.

Научный руководитель - доктор архитектуры, профессор
Кертменджян Давид Григорьевич

Официальные оппоненты - член корр. НАН РА
Асратян Мурад Маркарович
кандидат архитектуры
Киракосян Люба Владимировна

Ведущая организация – Национальный музей-институт архитектуры имени Ал.Таманяна

Защита диссертации состоится 14-го марта 2019г. в 14.00 часов на заседании специализированного совета 016 Искусствоведение ВАК РА, действующего в Институте искусств НАН РА (адрес: 0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Института искусств НАН РА.

Автореферат разослан 25-го января 2019г.

Ученый секретарь специализированного
совета, доктор искусствоведения,
профессор **Асатрян А. Г.**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեման

Նոր Ջուղայի ապարանքները ճարտարապետական նոր ոճ ստեղծեցին Պարսկաստանի և հայկական պատմական ճարտարապետության համատեքստերում, որի արմատները պետք է որոնել Իրանի և Հայաստանի պատմության համաձուլվածքում: Նրանց ուսումնասիրության միջոցով կարելի է միջավայրակայուն ուղի բացել տարածքի համադրական ճարտարապետության ուսումնասիրության զարգացման մեջ:

ՈՒսումնասիրության առարկան

Սույն աշխատության ուսումնասիրության նյութ են դարձել Նոր Ջուղայի բնակելի ճարտարապետության մաս կազմող ապարանքների շինությունները՝ Սեֆյան դինաստիայի իշխանությունից մինչև Ղաջարների օրերն ընկած ժամանակահատվածում: Նկատի է առնվել նաև այդ օրերում ապրող մարդուն բնորոշ կենցաղային ու հոգևոր աշխարհը, որն ուսումնասիրվել է բնակելի ճարտարապետության պատմության, տիպաբանության, հորինվածքի տեսության, շինարվեստի առանձնահատկություններով: Ատենախոսությունում կարևորվում են հատկապես ոճերի տեսությունը, իրանական և հայկական պատմական ճարտարապետության դետալի հարցերը, ինչպես նաև գեղագիտությունը:

Ատենախոսության արդիականությունը

Հետազոտության նյութը պատմական բնակելի տների՝ ապարանքների ճարտարապետական բնութագրումն է: Մեկ առ մեկ մեկնաբանվել, քննարկվել և ուսումնասիրվել են կառույցների բաղկացուցիչ մասերը որպես Նոր Ջուղայի հայկական գաղթավայրին բնորոշ համակարգի մաս: Գիտական ուսումնասիրության են ենթարկվել բնակելի ճարտարապետության հատակագծային բազմազան լուծումները, բնակարանային սահմանազատման ձևերը, դրանց արտաքին տեսքը, ձևային համադրական լուծումները, շինարարական տեխնիկան, ինչպես նաև բնական լուսավորության ապահովումը, զարդանախշերով տան հարդարումը և տարածքի ճարտարապետության զանազան ավանդական ձևերի կիրառությունը: Նոր Ջուղայի ապարանքների ներքին ձևավորման և ինտերիեր դիզայնի բաժնում առանձին ուշադրության են արժանացել տան ներսույթի ձևավորումը, ծածկի յուրահատուկ լուծումները, ներքին մակերևույթների և հատակի մշակումները և այլն: Նշվածները մեծ կարևորություն ունեն թե՛ հայկական, թե՛ իրանական գիտական իրականություններում և արժանի ու անհետաձգելի են ուսումնասիրության տեսակետից:

Նոր Ջուղայի ապարանքները կառուցել են տեղի հայերը, դրանց ուսումնասիրությամբ կարելի է ծանոթանալ բնակիչների շինարարական բնաշխարհիկ ավանդներին: Սույն աշխատության մեջ քաղաքաշինությունն ու բնակելի ճարտարապետությունը ներկայացվել են որպես ազգային և միջազգային ժառանգություն: Առանց վարանելու կարելի է ամրագրել, որ Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական ժառանգությունը հայկական գաղթավայրային ճարտարապետության մինչև օրս չուսումնասիրված կարևոր մասն է: Նմանապես, այն իրանական ժառանգության եզակի երևույթներից է, որն անհապաղ պետք է ուսումնասիրվի և լրացվի ուշ

միջնադարյան և նոր ժամանակաշրջանի ճարտարապետության էջերում:

Ուսումնասիրության նպատակն է վերլուծել և բնութագրել իրանական և հայկական արտահայտչամիջոցներով ստեղծված Նոր Ջուղայի «խոջաների» ապարանքների ճարտարապետությունը:

Ատենախոսության գիտական խնդիրներն են՝

1. Նոր Ջուղայի հայկական գաղթավայրի կազմավորումն ու բնակավայրի կառուցապատման զարգացումը:
2. Նոր Ջուղայի մշակութային ժառանգության բնութագրումն ու ապարանքների ճարտարապետության տեղը դրանում:
3. Ավերված ապարանքների քննական ուսումնասիրությունը:
4. Ներկայիս կանգուն վիճակում գտնվող ապարանքների փաստագրավերլուծությունը:
5. Հայ-պարսկական և միջազգային ճարտարապետական փոխազդեցությունները Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության մեջ:
6. Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական բնութագրումը:

Ուսումնասիրության մեթոդը

Աշխատությունն, ըստ էության, պատմաճարտարապետական կոնկրետ օրինակի «Կեյս ստեդի» (կոմպլեքսային) հետազոտություն է, որն իրականացվել է որակական վերլուծության համեմատական մեթոդով:

Շենքերի փաստագրավերլուծությունը կատարվել է հորինվածքի տեսության, «կառուցողական վերլուծության» եղանակով՝ անվան ստուգաբանումից դեպի գտնվելու վայրի բնորոշումը: Ուսումնասիրության մեջ հաջորդաբար հակիրճ քննարկվել են գլխավոր հատակագիծը, սենյակների փնջավորումը, ընդլայնական և երկայնական կտրվածքների կոորդինացիոն ամրագրումը, առաստաղ-տանիք կոնստրուկտիվ համակարգի մեկնաբանությունը, ճակատ, ծավալ, ներքին և արտաքին տարածությունների համակեցության վերլուծությունները, շենքի՝ կոնստրուկտիվ, հարդարման և շինարվեստի մանրամասների ներկայացումը, բացվածքների և զարդարվեստի ճանաչողական դասակարգումը և այլն: Այդ բոլորը կատարվել է հետազոտության հետևյալ հանգրվաններով՝

1. Ուսումնասիրվող ապարանքների վերաբերյալ դաշտային ու արխիվային գծագրական փաթեթների ուսումնասիրություն:

2. Լուսանկարների և պատկերների բացահայտումը, արխիվացումը և ներմուծումը աշխատության գործընթացներում:

3. Ուսումնասիրվող շենքերի կամ դրանց որոշ հանգույցների մոդելի հետազոտական սիմուլացիան:

4. Ապարանքներից յուրաքանչյուրը մեկնաբանվել է տիպաբանության, հորինվածքի և շինարարական կոնստրուկցիաների տեսության սկզբունքներով:

Ատենախոսության նորույթը

Նոր Ջուղայի ճարտարապետությունը մինչև օրս ներկայացվել է հանրային, գլխավորապես՝ պաշտամունքային շենքերի օրինակով: Աշխատությունում առաջին անգամ ամբողջական կերպով ներկայացվում է Նոր Ջուղայի ապարանքների ճար-

տարապետությունը: Հայկական և պարսկական տեսակետների միահյուսմամբ՝ նորովի մեկնաբանվել են հայկական «խոջայական» և այլ ապարանքների ճարտարապետական ուսումնասիրության հետևյալ խնդիրները՝

ա – տիպաբանական ձևագոյացման մեթոդական վերլուծությունն ու տարածական սխեմաների գնահատումը և համակարգումը:

բ – Հորինվածքային «կառուցվածքային» վերլուծությունն ըստ ճարտարապետական ծավալատարածական հորինվածքի տեսական դրույթների:

գ – Շինարվեստի դետալային փաստագրումը և առանձնահատկությունների վերահանումը:

դ – Վերոնշյալ կետերի միահյուսմամբ կատարվել է Ջուղայական ապարանքների ոճական հատկանիշների բնութագրումը, ինչպես նաև նրանցում առկա մշակութային երկխոսությունը:

Ատենախոսության գրականության տեսությունը

Ատենախոսությունում ներգրավված աշխատությունները երեք տիպի են՝ առաջինը՝ պատմափաստագրական նյութերն են, երկրորդը՝ Նոր Ջուղայի ճարտարապետությանը վերաբերող նյութերը և երրորդը՝ հենց Նոր Ջուղայի ապարանքների այս կամ այն հարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները:

Պատմափաստագրական նյութերից առանձնապես կարևորվում են պատմական, տեղագրական ու ճանապարհորդական հետազոտությունները: Դրանցից հատկապես կարևոր է Հ. Տեր-Հովհանյանի «Պատմություն Նոր Ջուղայի» երկհատոր աշխատությունը, որն առաջին անգամ տպագրվել է 1880 և 1881 թվականներին Նոր Ջուղայում, հետագայում թարգմանվել պարսկերեն լեզվով ու լույս տեսել Իսպահանում 2000թ: Տեր-Հովհանյանի աշխատությունը պատմական ուղեցույց է հանդիսացել տվյալ ուսումնասիրության համար: Տվյալ թեքումով կարևոր հրատարակություններ են նաև Մ.Ռ Սպահանիի եւ Ալիրեզա Էսմաիլի աշխատությունը (Սպահան, 2005), Լուսլի Էմմայի Հոդվածների ժողովածուն (Թեհրան, 2012) և այլն:

Ի տարբերություն նշվածների՝ Կարապետ Կարապետյանի աշխատությունը կիզակետում է վերցնում Նոր Ջուղայի բնակելի ճարտարապետությունը (Սպահան, 2007): Հաջիղասեմ Քամբիզի աշխատությունը (Սպահան, 1999) տեղեկատվություն է Նոր Ջուղայի ճարտարապետության մասին ընդհանրապես: Ջոն Քարսվելը (Օքսֆորդ, 1968) և ավելի ուշ նաև Արմեն Հախնազարյանը (Միլան, 1991) կիզակետում են վերցնում Նոր Ջուղայի եկեղեցիների ճարտարապետությունը:

Նոր Ջուղայի ապարանքներին վերաբերող աշխատություններից ատենախոսության համար կարևոր նշանակություն են ունեցել մի շարք հրատարակություններ: Հրավարդ Հակոբյանի և Ավո Հովհաննիսյանի աշխատությունը (Երևան, 2007) կիզակետում է վերցնում Նոր Ջուղայի խոջայական ապարանքների հարդարանքը: Այն ներառում է ապարանքներում եղած ընդհանուր նկարազարդումները, դիմանկարներն ու թեմատիկ հորինվածքները: Լևոն Մինասյանի գրչին պատկանող «Ակնարկ Սպահանի Ջուղայի ապարանքների» գրքում (Սպահան, 2008) բերված են տեղեկություններ ու բացատրություններ խնդրո առարկա ապարանքների նորագույն զարգացումների մասին: Դիբայի, Ռիվալթի և Սանթիլինի «Սպահանի ապարանքնե-

ը» գրքում (Սպահան, «Խորասգան» համալսարանի տպարան, 1999) առկա են ծավալուն տեղեկություններ ու փաստեր այդ պատմական ապարանքների և դրանցում ապրած մարդկանց կենցաղի մասին: Այս գրքում զետեղված հատակագծերն ու պատկերներն առավել ամբողջական են, քան նախորդ աղբյուրներինը և, բացի այդ, նրանում նշված են տեղեկություններ Ստեփանյանի տան մասին, որն անտեսված էր մյուս աշխատություններում: Նոր Ջուղային է հատկացվել իրանյան «Պայման» պարբերականի 2006 թվի 40-րդ համարը, որի ճարտարապետական հոդվածներն արժեքավոր տեղեկություններ են մատուցում ընթերցողին. դրանցում ընդգրկված են տեղեկություններ Նոր Ջուղայի ոչ միայն ճարտարապետության, այլև մշակույթի և ուրիշ հետաքրքիր սոցիալական միջոցառումների մասին: Ուշագրավ է Նադերե Շոջադելի հոդվածը (Թեհրան, 2006), որը մանրամասներ է հաղորդում Ջուղայի ներկա օրերի ճարտարապետական միջոցառումների մասին: Մի ուրիշ հեղինակ՝ Ռուհոլա Սայդասգարն, իր հոդվածում ուսումնասիրում է Նոր Ջուղայի ապարանքներում եղած ճարտարապետական մանրամասներից գմբեթների հորինվածքը (Թեհրան, 2006) և այլն:

Ներկայացվող ատենախոսությունում, համադրելով ակնարկված հեղինակների կարծիքները, մասնավորաբար կատարվել է Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության մեթոդական համակողմանի ուսումնասիրությունը, որը հիմնվում է նաև դաշտային և արխիվային նյութերի մեթոդական վերլուծության վրա:

Ատենախոսության փորձաքննությունը և գործնական նշանակությունը

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնում: Ատենախոսության կարևորագույն դրույթներն արտացոլված են տպագրված 8 հոդվածներում, զեկուցվել են Հայաստանի և Իրանի երիտասարդ գիտնականների գիտական կոնֆերանսներում: Ատենախոսության արդյունքները կարելի է օգտագործել հայկական գաղթավայրերի ճարտարապետության և, առհասարակ, մշակութային ժառանգորդման և մշակութային սինթեզի ուսումնասիրության ոլորտում: Այն կարող է օգտագործվել որպես գիտահետազոտական նյութ միջնադարյան և նոր շրջանի ուսումնասիրությունների համար:

Ատենախոսությունը պաշտպանության տակ է վերցնում

Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական ինքնատիպ ոճը, նրանցում եղած մշակութային երկխոսությունը, որ ոչ միայն արդյունք է հայկական և Սեֆեյան ճարտարապետության փոխազդեցությունների, այլ՝ բնակավայրը լինելով գործուն կենտրոն նաև հետագա դարերում, այդ երկխոսության մեջ ներդրված են նաև հայկական և Աֆշարի, Զենդյան ու Ղաջարական փոխազդեցությունները: Տվյալ մշակութային հատկանիշը հատկապես բնորոշ է ուսումնասիրվող ապարանքների ինտերիերային արվեստին: Այս բոլորի հետ Նոր Ջուղան արևելյան և արևմտյան մշակույթների փոխազդեցության տարածք է, ինչը նոր երանգ է տալիս վերևում ակնարկվող փոխազդեցություններին և հատուկ է հայկական գաղթավայրերի մշակութային գործունեությանն առհասարակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը կազմված է առաջաբանին հաջորդող երեք գլուխներից, 70 անվանումով հայ և օտար հեղինակների աշխատությունները բովանդակող օգտագործված գրականության ցանկից, պլանշետներով կազմված 146 հավելվածից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԼԱՆԴՇԱՖՏՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Այս գլխում ներկայացվել է Նոր Ջուղայի հիմնադրման պատմական տվյալները և անցում է կատարվել քաղաքի՝ որպես ուսումնասիրվող ապարանքների ճարտարապետական միջավայրի, մասնագիտական ներկայացմանը:

Հայկական հողերը գրավելու թուրք-պարսկական ընդհարումների ընթացքում Շահ Աբասն Արարատյան դաշտի և այլ տարածքների հայ բնակչությունը վերաբնակեցրեց Սպահանի ու Պարսկաստանի զանազան նահանգներում: Փաստորեն, մայրաքաղաք Սպահան բռնագաղթեցված 500 արհեստավորական ընտրված ընտանիքներին բաժին հասավ բնակվել Նոր Ջուղա հայկական ավանում: Հայերը շենացրեցին բնակավայրը՝ այն դարձնելով ոչ միայն Պարսկաստանի ծաղկուն բնակավայրերից, այլև հայկական գաղթավայրերի ճարտարապետության և, առհասարակ, տնտեսական ու մշակութային հռչակավոր կենտրոններից մեկը:

Նոր Ջուղան ստեղծվեց հայկական և պարսկական ճարտարապետական ժառանգորդությամբ: Բնակավայրի առաջին թաղամասերը հիմնադրվել են 1606 թվականին՝ Շահ Աբաս առաջինի օրոք: Հին Ջուղայից գաղթած ժողովրդի կողմից կառուցապատվեցին հինգ թաղամասեր, այդ թվում՝ «Մեծ Մեյդանը», «Փոքր Մեյդանը», «Չհարսուղը», «Ղարագելը», «Հակոբջանը» կամ «Յաղուբջանը», որ նաև հայտնի է «Հասիրբաֆան» (խսիրագործների) թաղամաս անունով:

Նոր Ջուղան Շահ Աբաս երկրորդի թագավորության տարիներին ավելի ընդարձակվեց: Քաղաքին ավելացավ ևս երեք թաղամաս՝ «Քարակոփների», «Թավրիզցիների» և «Երևանցիների»: Ընդհանուր առմամբ՝ Նոր Ջուղայի կառուցապատումը կարելի է բաժանել երկու մասի՝ հին և նոր: Հին հատվածում՝ արևելքից դեպի արևմուտք, ձգվում էր «Խոջա Նազարի փողոցը», որի երկու ծայրերին տեղադրել էին դարպասներ, որոնք գիշերները փակում էին: Արևելյան դարպասը կոչվում էր «Շահրիմանյան», իսկ արևմտյանը՝ «Սարֆարազյան»: Խոջա Նազար և հարավից հյուսիս ձգվող՝ Հաքիմ Նեզամի պողոտաներն իրար հատելով՝ քաղաքը բաժանվում է չորս ենթամասի: Վերևում նշված երկու դարպասները և քաղաքի պարիսպների աշտարակները փլվեցին Փահլևիների իշխանության օրոք՝ 1935 թվականին, քաղաքային երթևեկության ցանցի ու բնակավայրի ընդարձակման միջոցառումների հետևանքով, որի ընթացքում քաղաքով անցնող Զայանդեռուդ գետի մերձակա ապարանքներն ավերվեցին և դրանց հողամասերը հատկացվեցին հողագործությանը: Ներկայիս Նոր Ջուղան Սպահանի արվարձանն է: Փաստորեն, նրա լանդշաֆտն անմիջապես կապված է Սպահան քաղաքի և նրա պատմական անցուդարձի հետ: Նոր Ջուղան գտնվում է Սպահանի հարավային մասում: Նրա կենտրոնական մասում դեռևս մնում են հայկական թաղամասի շենքերը: Դրանց թվում են 13 հայկական եկեղեցիները և հռչակավոր Ս. Փրկիչ վանքը: Քաղաքում հայ բնակչությունը

համեմատաբար նվազել է և կազմում է շուրջ 5000 հոգի: Տեղում կան հայկական բնակելի և հասարակական բազմաթիվ շենքեր, որոնք տնօրինվում են նոր բնակչության կողմից: Նոր Ջուղայում եղած հայկական ճարտարապետական ժառանգությունը պահպանվում է տեղի թեմի և Իրանի պետական մարմինների համագործակցությամբ: Այդ հուշարձանները հայտարարված են Իրանի պատմական ժառանգության մի մասը և հայկական պատմական գաղթավայրերի ճարտարապետության օրինակներ: Վերջինների թվում են նաև սույն ատենախոսության թեման հանդիսացող և հաջորդ գլխում վերլուծվող 23 ապարանքները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ

Ապարանքների ուսումնասիրությունը կատարվել է ըստ նրանց իրավիճակի: Առաջին խմբում ընդգրկվել են ավերված և ներկայում գոյություն չունեցող ապարանքները, իսկ երկրորդ խմբում՝ մինչև օրս պահպանված ապարանքները:

Ա/ Նոր Ջուղայի ավերված և ներկայում գոյություն չունեցող ապարանքները

Այս մասի տեղեկությունները քաղվել են Կ.Կարապետյանի նկարագրական աշխատությունից, Լևոն Մինասյանի՝ Նոր Ջուղայի բնակելի ճարտարապետությանը նվիրված աշխատությունում եղած տեղեկություններից, ինչպես նաև Իսպահանի և Թեհրանի համալսարանների արխիվային նյութերից: Ուսումնասիրված օրինակները ներքոհիշյալ վեց ապարանքներն են:

1/ Մարիամ Հախնազարյանի և էռնեստ Հոլցերի (Ernest Hoeltzer) **ապարանքը**

Էռնեստ Հոլցերը գերմանացի ինժեներ ու լուսանկարիչ էր: Նա 1863թ. Իրան էր գործուղվել հեռագրատուն հիմնելու և շահագործման հանձնելու համար: Նա կյանքն անցկացրել է Նոր Ջուղայում, երկու տարբեր տներում, որոնցից մեկը մինչև վերջերս կանգուն է եղել ներկա Խաղանի պողոտայի, «Թելեգրամխանե» (հեռագրիչների) փողոցում, Հովհաննեսի ապարանքի հարևանությամբ:

Հոլցերների ընտանիքի ապարանքի լուսանկարների համեմատությամբ պարզվում է, որ այն որոշ չափով վերանորոգվել է և դրան ավելացել է երրորդ հարկ: Ճարտարապետությամբ շենքը եռահարկ բրգաձև կառույց է, նրանում նկատելի է Ղաջարական և հայկական տարրերի համադրումը: Շինարվեստը աղյուսակերտ առանձնահատկություններով է:

2/ Վրթանես Աբգարի ապարանքը

Համակառույցը Սեֆյան շրջանի ճարտարապետության առանձնահատկություններով է: Գտնվում էր Սուրբ Մարիամ եկեղեցու հարավում, Մեյդանե Բոզորգ (Մեծ Հրապարակ) թաղամասում: Գոյություն ունեցող գծագրերի և բազմաթիվ լուսանկարների հիման վրա կարելի է տեսնել, որ ապարանքը բակավոր հորինվածք ունի, բացվածքները լուծվել են երկսլաք կամարներով, շենքին առանձնապես բնորոշ են ծածկերի և անկյունային հատվածների մուքարնասները: Շենքն իր միաշնչությամբ պարսկական ճարտարապետության եզակի նմուշներից է: Այն աղյուսակերտ է, վարպետորեն կատարված հարդարանքներով:

3/ Աղա Քամալի ապարանքը

Ապարանքը կառուցվել է Շահ Աբասի օրոք: Գտնվում էր Սուրբ Մարիամ եկեղեցու հարավում, Մեյդանե Բոզորգ (Մեծ Հրապարակ) թաղամասում: Հողամասը այգեպատ է, որի արևմտյան մասում եղել են տան ավերակները: Շենքից պահպանվել են գծագրական և լուսանկարչական նյութեր, որոնք պահպանվում են արխիվում: Սենյակները դասավորված են կենտրոնական գլխատուն հիշեցնող սենյակի շուրջ: Ուշագրավ է խորը իվանը, որի երկու կողմերում եղած սենյակների «քալիլ-ազերի» կոչվող ծածկի լուծումը հազվագյուտ ճարտարապետական մանրամաս է ներկայիս իրանյան ժառանգությունում: Այս տեսակի ձևավոր ծածկի գործածումը տարածված է եղել հատկապես Մոնղոլների շրջանի Իսպահանում: Հատկանշական է նաև, որ ապարանքը պատկանում է տարածքի այն սակավաթիվ տների խմբին, որտեղ առկա է «բադ-գիրը» (օդամուղ բուրգ): 2006թ. կատարված հաշվառումների ընթացքում պարզվել է, որ առանձնատունը փլվել է և նրա տարածքում նոր շենքեր են կառուցվել:

4/ Ոսկանի ապարանքը

Ոսկանի կամ Ոսայի ապարանքը կառուցվել է 17-րդ դարում՝ Չհարսու թաղամասում, արևելյան փողոցի վրա, որը նրա անունով «Ոսկան» էր կոչվել: 2006թ. կատարված հուշարձանային հաշվառումների համաձայն՝ ապարանքն ավերված է եղել և ներկա վիճակով տեղում երկու նոր շենքեր են կառուցվել: Ապարանքը հորինվածքով կազմվել է երկու մասերից՝ հյուսիսային ու հարավային: Շենքը երկհարկանի է: Ինչպես ցույց են տալիս արխիվային նյութերը, ապարանքի հատակագծի երկու բաժիններով կառուցապատումը տարածքի ժառանգորդական լուծումներից է:

Ներկայիս ավերված ապարանքի դիմաց, արևելյան մասում ու հենց նույն փողոցի հարևանությամբ գտնվում է մեկ այլ տուն, որը նույնպես պատկանել է Ոսկանի ընտանիքին: Հենց այս տանը պահպանվել է մի քարե արձանագրություն, որտեղ նշված է Ոսկանի ծննդյան թվականը՝ 1815թ.: Շենքը ճարտարապետությամբ միաշունչ է, շինարվեստը բնորոշ է աղյուսի ճարտարապետությանը: Հարդարանքը սպահանյան ճարտարապետության վարպետության օրինակ է:

5/ Եսայիի ապարանքը

Գտնվել է Նոր Ջուղայի Մեծ Մեյդան թաղամասում, որտեղով այսօր անցնում է Խաղանի պողոտան: Դժբախտաբար, այս ապարանքը Հաքիմ Նեզամի պողոտայի կառուցման ժամանակ ամբողջությամբ ավերվել է: Շենքի արխիվային նյութերը դեռևս չեն գտնվել:

6/ Ալո Խանի ապարանքը

Գտնվել է Նոր Ջուղայի Երևանցիների թաղում, Խաղանի պողոտայի վերջում: Ըստ տեղեկության՝ այն նման է եղել «Չեհել Սոթունի» (քառասուն սյունով) անունով հայտնի պալատի հորինվածքին: Ուշագրավ են եղել տան դռների ու մեծ պատուհանների երեսակալների հարդարանքները, որոնք մշակված են եղել «օրսի» կամ սպահանյան փայտակերտ վիտրաժային արվեստով: Այս տան պատերին եղած արձանագրությունները ներկայումս պահպանվում են Ս.Ամենափրկիչ Վանքի թանգարանում: Տունն ավերվել է 1970թ.: Այլ տեղեկություններ դեռևս չեն բացահայտվել:

Բ/ Նոր Ջուղայի կանգուն մնացած ապարանքները

1/ Սուքիասի ապարանքը

Գտնվում է Դավթի տան հարևանությամբ՝ Թաբրիզիհա թաղամասում: Նրա կառուցման թվականը, ըստ որոշ աղբյուրների, կարելի է համարել 1655թ.:

Գլխավոր ընդունելության դահլիճում պատկերված է Շահ Աբաս առաջինի նկարը: Տան մեջ թագավորի նկարի առկայությունն ապացույցն է տան տիրոջ բարձր դիրքի ու պաշտոնի: Այս հանգամանքը կողմնակի վկայություն է այն մասին, որ շենքը Շահ Աբաս 1-ի ժամանակ գոյություն է ունեցել: Անկասկած, կարելի է այս ապարանքը համարել Սեֆյան թագավորության շրջանից մնացած ժառանգություն: Ներկա դրությամբ այս շենքի գործառույթը փոխվել է, և այնտեղ է գտնվում Գեղարվեստական և վերանորոգման համալսարանը:

2/ Դավթի ապարանքը

Այս ապարանքը գտնվում է Թաբրիզիհա (թավրիզեցիների) պողոտայի վրա և մի նեղ փողոցով առանձնանում է Սուքիասի ապարանքից: Սեֆյաններին հաջորդած շրջաններում այս ապարանքը փոփոխություններ է կրել, և հարավային մասում ավելացել են երկու սենյակներ և մի «էյվան»: Զենդյանների շրջանում արևմտյան, իսկ Ղաջարյան շրջանում՝ հարավային մասը փոփոխություններ են կրել:

Դավթի ապարանքին կցված շենքը

Դավթի ապարանքի հարավային մասում առանձին կառույցով, սակայն ապարանքին կապված, միհարկանի շենք կար, որն առանձին գործառույթ ուներ՝ հատկացված էր կանանց: Շենքը միհարկանի էր և առանձնատանը կապվում էր հարավ-արևելյան մասում ընկած միջանցքով: Այս տան կենտրոնական մասում էր գտնվում քառակուսի միջնաբակը, որի երեք կողմերում կառուցված էին շենքի երեք հատվածները: Հյուսիսային մասում են գտնվում միջանցքով իրար միացած երեք համաչափ սենյակներ, որոնք ետնասենյակներ ևս ունեն: Այդ սենյակները «թաղվա-թավիզե» կառույցն ունեն: Արևմտյան մասում շենքի մի հատվածն ավելի կտրված դիրք է ստանում, նաև մի փոքրիկ բակ ունի: Այս բակի վրա է գտնվում մի մեծ սենյակ, որի դուռը բացվում է բակի վրա: Այս հատվածի կողքին ևս բակին միացող միջանցք է կառուցված: Արևելյան կողմից շենքի ճակատը սիմետրիկ կառույց ունի, մինչդեռ հատակագիծն ազատ տարածքային հարաբերությամբ կառուցածևին է հետևում և խիստ բարդ է: Կենտրոնում մի սենյակ է գտնվում, և չորս սենյակներ շղթայաձև կապվում են միմյանց: Կենտրոնական սենյակը շրջապատող միջանցքի շնորհիվ հարավային ճակատը շրջանակի մեջ է առնվել և զարդարված է հյուսիսային ճակատին համապատասխան զարդանախշերով:

3/ Մարթա Փիթըրզի ապարանքը

Այս ապարանքը Սեֆյանների ժամանակաշրջանից մնացած ժառանգություն է: Նրա առաջին սեփականատերը Փաթուսի անունով մեկն է եղել: Նրանից հետո տունը պատկանել է Մարթա Փիթըրզին, և հենց նրա անունով է տունը հայտնի դարձել, նաև ճանաչված է եղել նրա հոր՝ Ջանի Գանի անվամբ: Շենքը ժամանակին զարդարված է եղել քրիստոնեական բովանդակությամբ կրոնական բնույթի նկարչություններով, որոնք Ղաջարների շրջանում ոչնչացվել են: Երբ Մարթա Փիթըրզի

պապը վերստին գնել է այդ տունը, աշխատել է վերակառուցել այն: Անցյալում շենքն ավելի մեծ է եղել, սակայն Հաքիմ Նեզամի կառուցապատման ընթացքում նրա մի մասը ստիպված քանդեցին: Այս տունը կառուցվածքով տարբերվում է իր ժամանակակից մյուս տներից: Թվում է, թե այն ամբողջությամբ «քուշքի» պես է եղել: Շենքը կառուցվել է այգու կենտրոնում, և այդ այգին ժամանակի ընթացքում շատ փոփոխության է ենթարկվել: Սեֆյան ժամանակաշրջանից պահպանված քառակուսի մասը կարևորագույն հատվածն է: Արվեստի համալսարանի (Ֆարաբի) ներկայիս փոփոխված ձևով բակը մասերի է բաժանվել: Գլխավոր ընդունելության դահլիճը նույնպես սենյակների է բաժանվել: Հյուսիսային կողմում գտնվող գլխավոր մուտքը անցյալից է մնացել: Հարավ-արևմտյան կողմում բակի պատի վերաշինումը, քարե աստիճանների վերցնելը և հին մուտքի պահպանումը, հյուսիսային մասում «մոշաբբաք» պատուհանի վերանորոգումը և շենքի համար նոր մուտքի կառուցումը տեղի է ունեցել 1978թ., իսկ արևելյան մասում երկրորդ հարկի կառուցումը և հարավային պատի արտաքին երեսապատումը՝ 1979 թվականին:

4/ Զավոյյանի ապարանքը

Այս ապարանքը գտնվում է Թաբրիզիհա (թավրիզեցիներ) պողոտայի վրա՝ Ս. Մինաս եկեղեցու հարևանությամբ: Նրա առաջին սեփականատերը եղել է Ստեփան Աղանուրը, իսկ 1946թ. այն վաճառվել է Զավոյյան ընտանիքին: 1989թ. սկսվեցին շենքի վերանորոգման աշխատանքները, որոնք ավարտվեցին 2008թ.: «Փոլ Շիր» ընկերությունն այս շենքի վերանորոգչական աշխատանքի համար պարգևատրվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից: Շենքի ներկա գործառույթը վարչագրասենյակային է:

Շենքի շքամուտքի հատվածից բացի, որը պատկանում է Սեֆյանների ժամանակաշրջանին, մնացյալ մասերը կառուցվել են Ղաջարների օրոք: Նախկինում շենքն ավելի ծավալուն է եղել և ունեցել է այլ մասեր ևս, սակայն ներկայումս նրանից մնացել է սենյակներով պարփակված մի փոքրիկ բակ: «Փոլ Շիր» ընկերության կատարած վերանորոգման արդյունքում շենքի կողմնային երկու «էյվանները» դարձել են սենյակներ, իսկ ընդունելության խաչաձև դահլիճը կիսվել է և վերածվել երկու սենյակի:

5/ Խոջա Պետրոս Վիլիջանի ապարանքը

Ապարանքն, ըստ նրա պատին կատարված արձանագրության, կառուցվել է 1668թ., ինչը համընկնում է Սեֆյան դինաստիային պատկանող Շահ Սուլեյմանի թագավորության ժամանակաշրջանին: Գտնվում է Փոքր Մեյդան թաղամաս /Հաքիմ Նեզամի խաչմերուկում: Ապարանքը բաժանված է երկու՝ ամառային և ձմեռային, մասերի: Հյուսիսային կեսը, որն, ի դեպ, ձմեռային մասն է կազմել, համարվել է տան կարևորագույն մասը, որտեղ և գտնվում էր գլխավոր մուտքը և «հաշթիի» տարածքը: Այս մասը լիովին ավերվել է: Այս ապարանքից այսօր մեզ հասած ժառանգությունը նրա ամառանոցային մասն է, որը բաղկացած է երկու հարկից: Ցոկոլային հարկն առավել, քան առաջին հարկը, կանգուն ու անվնաս է մնացել: 1994 թվականից սկսած այս ապարանքը գտնվում է վերանորոգման տակ: Ավերված սենյակների մի մասը վերանորոգվեց 1997թ., և այդ միջոցին գմբեթը վերակառուցվեց: Վերոհիշյալ ավերված մասը մեծ հավանականությամբ ավելի ուշ ժամանակա-

շրջանում Մոշրեֆ Զադեհի ապարանքն է կազմել և կրել է այդ անունը:

Քանի որ որևէ վավերական փաստաթուղթ գոյություն չունի, որով հնարավոր լինի պարզել շենքի կառուցման ստույգ թվականը, ուստի բավարարվում ենք վավերացնելով, որ տան նուրբ ու գեղեցիկ զարդանախշերը հավանականորեն հուշում են Սեֆյան ժամանակաշրջանը: Այս երկու տներն իրար շատ նման են ու միաձև, մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այս ապարանքը Խոջա Պետրոս Վելիջանիի առանձնատան մի մասն է, որ կառուցվել է 1668թ.: Այս թիվը համընկնում է Սեֆյան դինաստիային պատկանող Շահ Սուլեյմանի թագավորության ժամանակաշրջանին: Եթե այս վարկածը ճիշտ լինի, ուրեմն այս երկու տան բակը կարելի է մտնել Յաս պողոտայի վրա գտնվող մի դարպասից:

6/ Ստեփանյանի և Այյուբիների միացած ապարանքները

Ստեփանյանի ապարանքը

Գտնվում է Մոհթաշամ Քաշանի պողոտա, Դաղիղի պողոտայում, Այյուբիների տան հարևանությամբ և զբաղեցնում է 645 քառ. մ տարածություն: Ապարանքը բաժանված է երկու՝ հյուսիսային և հարավային, մասերի: Հյուսիսային կեսը կառուցվել է Սեֆյանների, իսկ հարավայինը՝ Ղաջարների օրոք: Տան վերանորոգումը տևել է երեք տարի, որի ընթացքում վերանորոգվել ու ամրակայվել են վնասված մասերը: Բակում տեղադրվել է դրենաժի ցանց, ավելացվել է սանհանգույց, իսկ տանիքը ծածկվել է ջրամեկուսիչով՝ իզոլացիայով: Բոլոր հնարավոր աշխատանքները կատարվել են բնակելի այդ միջավայրի ֆունկցիոնալ փոփոխության՝ վարչագրասենյակային դարձնելու ուղղությամբ: Վերանորոգումից անմիջապես հետո այն տրամադրվել է Իսպահանագիտական կենտրոնին և Ազգերի տանը, իսկ ավելի ուշ այդ շենքը վաճառվել է Ճարտարապետական ու գեղարվեստական համալսարանին: Ստեփանյանի և Այյուբիհա ապարանքները կցվել են միմյանց, որպեսզի առավելագույնս ապահովվի ճարտարապետությանն ու քաղաքաշինությանն անհրաժեշտ տարածքը:

Այյուբիների ապարանքը

Այս ապարանքը Սեֆյան Շահ Աբաս Բ-ի ժամանակաշրջանից մնացած ժառանգություն է, որի միայն հյուսիսային հատվածն է մեզ հասել: Անցյալում այն ավելի ընդարձակ ու ծավալուն է եղել: Այն երկու հարկ է ունեցել, որի ստորին՝ ցոկոլային հարկն օգտագործել են ձմռանը, իսկ առաջինը՝ ամռանը: Տան նոր սեփականատերը մտադիր է եղել փլել այն և տեղում նոր շենքեր կառուցել, սակայն Պատմամշակութային ժառանգությունների պահպանման կազմակերպությունն այն գնել է, և նրա արևելյան հատվածն արդեն վերանորոգվել է: 2006թ. տունը վաճառվեց համալսարանին, որը ևս իր հերթին, ինչպես նշվեց, միմյանց միացրեց Ստեփանյանի և Այյուբիհա շենքերը:

7/ Խաչիկի ապարանքը

Այս ապարանքը գտնվում է Չարսուղ թաղամասում: Ապարանքի կարևոր հատվածը բակի հյուսիսային կողմում գտնվող ձմեռային մասն է: Ապարանքի այս մասն ավերվել և ապա՝ վերակառուցվել Առաջին Փահլավիի օրոք: Շենքի հին կառույցից մնացել է հարավային կողմում գտնվող ամառանոցային մասը: Ապարանքի

ներկայիս տիրոջ վկայությամբ՝ այդ ապարանքը պատկանել է մետաքսի վաճառական երեք եղբայրների: Շենքի հյուսիսային և հարավային մասերը, ժամանակի ընթացքում տարբեր տերերի կողմից փոփոխության ենթարկվելով, կորցրել են իրենց միաձույլ ու համասեռ կառուցվածքը: Հյուսիսային ու հարավային հատվածները, մեծ հավանականությամբ, ժամանակին մի ամբողջություն են կազմել, և հնարավոր է, որ կատարված փոփոխությունների ընթացքում նրա որոշ մասերը վերացել են: Երևի սկզբում այդ երկու հատվածների միջև մի մեծ բակ է եղել, որի միջոցով իրականացել է նրանց կապը: Ներկա դրությամբ շենքը երկու փոքր բակեր ունի՝ հյուսիսում և հարավում: Այս տանը կատարված փոփոխությունն այնքան մեծ է, որ դժվար թե լինի վերականգնել նրա սկզբնապատկերը:

8/ Գրիգորի կամ Մարտիրոսյանի ապարանքը

Թվում է, թե Փոքր Մեյդան թաղամասի, Խաղանի պողոցում, այս ապարանքը նախկինում ավելի ընդարձակ է եղել և բազմաթիվ սենյակներ է ունեցել: Առավել փոփոխությունների է ենթարկվել արևմտյան սենյակը: Անցյալում այս սենյակը երկհարկանի և շենքի մյուս մասերին համահավասար բարձրություն է ունեցել: Ներկայումս այս սենյակը միհարկանի է և փայտով երեսապատված, իսկ շենքն օգտագործվում է որպես բնակարան:

9/ Հովսեփի ապարանքը

Այս ապարանքը Սեֆյանների շրջանից պահպանված ժառանգություն է, գտնվում է Հաքիմ Նեզամի պողոտայի Թաբրիզիհա փողոցի, Թալեղանի փողոցում, որի հյուսիսային հատվածը ժամանակի ընթացքում կրած փոփոխությունների հետևանքով կորցրել է իր համաչափությունը: Արևմտյան տարածքում նույնպես, թվում է, թե խափանվել է կառուցվածքի ներդաշնակությունը: Այս փոփոխությունների ստույգ ժամանակը հայտնի չէ և որոշ դեպքերում նույնիսկ դրանց զատորոշումը խիստ դժվար է:

10/ Հովսեփ Ամիրխանյանի ապարանքը

Գտնվում է Հաքիմ Նեզամի պողոցում, Թաբրիզիհա փողոցի, Թալեղանի փողոցում: Ապարանքը ճանաչված է նաև նրա վերջին սեփականատիրոջ՝ Շիր-դուշ մականունով հայտնի Աղա Դավուդիի անունով: Շենքը պատկանում է Սեֆյանների ժամանակաշրջանին: Ապարանքը բնական լույսը ստանում է միայն հարավային կողմից: Ապարանքը կառուցվել է «թաղ-վա-թավիզե» կառուցվածքով: Մի քանի սենյակ ևս կցվել են ապարանքին: Այս ապարանքը մինչև վերջերս ծառայել է որպես բնակարան և ունեցել է մասնավոր սեփականատեր, սակայն ինչպես 2011թ., տողերիս հեղինակի կողմից կատարված այցի ժամանակ պարզվեց, որ ներկայումս այն թափուր ու լքված, կիսավեր վիճակում է գտնվում, այնպես որ դրսից կարելի է տան ներսը և տարբեր մասերը տեսնել: Այս տան քայքայման ու փլուզման ընթացքը սույն ուսումնասիրության ընթացքում, տողերիս հեղինակի կողմից լուսանկարներով արձանագրվել է:

11/ Մինաս Քրաթի ապարանքը

Հաքիմ Նեզամի, Թաբրիզիհա պողոտայի վերջում, Աղա Դավուդի պողոցում գտնվում է Մինաս Քրաթի ապարանքը. 2007 թվականին կատարված ուսումնասի-

ությունների համաձայն այս ապարանքը լքված ու թափուր վիճակում է: Ինչպես Կարապետյանը ևս նկարագրել է իր գրքում («Սպահանի Նոր Ջուղայի հայոց տները»), այս շենքի որոշ մասերն ավերվել են, այնամենայնիվ նրա մնացյալ մասերը դեռ կանգուն են: Հյուսիսային բակը վաճառված է մեկ այլ սեփականատիրոջ, ուստի դեպի այդ բակը բացվող բացվածքները փակվել են:

12/ Մանուկ Բարսեղի ապարանքը

Գտնվում է Թաբրիզիհա թաղամասում, Ս.Մինաս եկեղեցու մոտակայքում: Այն կառուցվել է Սեֆյանների ժամանակաշրջանում, իսկ Ղաջարների օրոք ևս որոշ մասեր կցվել են նրան: Վերջին տասնամյակներում ապարանքը վաճառվել է Մինասյան ընտանիքին և բաժանվել մի քանի մասի: Այս փոփոխությունների հետևանքով տունը կորցրեց իր նախկին սկզբնական կառուցվածքը: Ապարանքի գլխավոր բաժինն ընկած է բակի հյուսիսային մասում, որը փայտյա զարդարված սյուներով «էյվան» ունի: Մյուս շենքերի պես, այս ապարանքը ևս ունի «օրոսի» ձևով պատուհաններ ու զարդարված դռներ: Արևմտյան հատվածում գոյություն են ունեցել յուղաներկ նկարներ, որոնք դրվում էին «թաղչեների»՝ թարեքների վրա: 1970թ. այս բոլոր նկարները տան սեփականատիրոջ կողմից վաճառվեցին, այնպես որ դրանցից ոչ մեկը չի մնացել: Ըստ 2006թ. կատարված ուսումնասիրությունների՝ այս շենքն առ այսօր որպես բնակելի տարածք է օգտագործվում:

13/ Սիմոնի ապարանքը

Այս ապարանքը, որ պատկանում է 17-րդ դարին, գտնվում է Մեծ Մեյդան թաղամասում, Ս.Ամենափրկիչ Վանքի հյուսիս-արևելյան կողմում: Այս ապարանքի առաջին սեփականատերը Հմայակ Քալանթարն է ճանաչվել, որից հետո այն պատկանել է Սիմոնին: 1843թ. ապարանքը վաճառվել է Հովհաննես Սուրենյանին, որը բնակելի այս տարածքը դպրոցի է վերածել: Ապարանքը երկու մասերի է բաժանվում և նրա կարևոր մասը գտնվում է հյուսիսային կողմում: Անցյալում ապարանքը նկարչություններով զարդարված սենյակներ է ունեցել, որոնցից ներկայումս միայն մեկն է պահպանվել: Ապարանքի հարավային կողմը երկհարկանի է եղել: Այս մասի դռներն ու պատուհանները ծածկվել ու վերացել են: Այս շենքը 1911-1933թթ. ծառայել է որպես բուժարան կամ պոլիկլինիկա, այնուհետև դարձել է մարմնամարզական դահլիճ, իսկ ներկայումս այնտեղ մի քանի ընտանիք է ապրում:

14/ Աբգարի ապարանքը

Գտնվում է Խաղանի պողոտայի, Ասիաբ փողոցում, Ջուղայի Հայոց մանկապարտեզին կից: Ապարանքը ճանաչված է վերջին սեփականատիրոջ՝ հայտնի տկն Թողայի անունով: Շինության վաղեմությունը վերադառնում է Սեֆյանների ժամանակաշրջանին: Գլխավոր ճակատը հյուսիսային կողմնորոշում ունի: Ղաջարների շրջանի վերջին տարիներին այն պատկանել է պրն Աբգարին: Այդ ժամանակ շենքն օգտագործվում էր սիգարետի արտադրման համար: Շենքի մի մասը, որը ջրանցքի վրա է գտնվում, անցյալում ջրաղացի համար է օգտագործվել, իսկ ներկայումս այնտեղ բնակվում են երկու կանայք:

Ապարանքի զարդարանքը բավական ճոխ ու գեղեցիկ է: Հյուսիսային կողմում աչքի է ընկնում «մոարաղ» աղյուսի զարդարանքը: Շքամուտքը հիացնում է իր

պարզ և, միաժամանակ, գերազանց զարդարանքով: Առաջին հարկի փայտյա «էյվանը» գրավում է իր բազում զարդամոտիվներով:

Ապարանքի ֆասադը կատարյալ սիմետրիկ է: Ստորին՝ ցոկոլային հարկը զուրկ է որևէ բացվածքից, այնպես որ պատշգամբների ու «էյվանի» տակ տեղադրված փոքր անցքերով պատուհանները չեն կարողանում ապարանքն ապահովել բնական լույսով: Առաջին հարկի երկու անկյուններում պատշգամբներ կան, որոնք միանում են «սե-դարի» մի սենյակի: Այդ երեք կիսակլոր կամարակապ դռների վերնամասում է գտնվում «գոլ-դասթե» պատուհանը: Կենտրոնում երկայնքով ձգվում է մի ընդարձակ սենյակ, որը մի «փանջ-դարիով»՝ հինգ կիսակլոր կամարակապ դռներով բացվում է դեպի «էյվանը»: Փողոցի վերջից կարելի է տեսնել գլխավոր ճակատը՝ «օրոսի» պատուհանների զարդարանքով:

15/ Վարձակալ կամ Մոսթաջերանի ապարանքը

Գտնվում է Դավուդի պողոտայի վերջում, Ջաննաթ փողոցում: Այս ապարանքի կառուցման ստույգ թվականը ճշտող փաստաթուղթ գոյություն չունի, այդուհանդերձ ընդհանուր ոճը, զարդարանքը և շքամուտքի զարդանախշերը վկայում են Սեֆյանների ժամանակաշրջանի վերջերին պատկանելու մասին: Ապարանքի գլխավոր ճակատը հյուսիսային կողմնորոշում ունի: Հյուսիսային ճակատը զարդարված է եղել շատ հարուստ ու նուրբ «մոարաղ» աղյուսյա զարդամոտիվներով, որը Մշակութային ժառանգության կազմակերպության վարպետների միջոցով փոխադրվել է Թախթե-Ֆուլադ արհեստանոցը: Հետազոտությունները պարզել են, որ շենքի պատերի նուրբ ծեփաշերտի ու ներկի տակ թաքնված են Պետրոս Վելիջանիի տան նմանությամբ, կարմրագույն ֆոնով նկարչություններ: Տան սեփականատերը 1996թ. քաղաքապետարանից ու Մշակութային ժառանգության կազմակերպությունից ստացել է այս տունը քանդելու թույլտվություն:

16/ Վարոսյան Մարգար Նադերի ապարանքը

Գտնվում է Թաբրիզիհա թաղամասի, Դավրեժ պողոտայի հյուսիսային մասում: Այս ապարանքը ճանաչված է իր վերջին սեփականատիրոջ՝ Վարոսյան Մարգար Նադերի անունով: Շենքը բաժանվում է հյուսիսային և հարավային մասերի, որոնց միջև ընկած է մի մեծ բակ: Շենքն արտաքին կողմից զարդարված է փոքր աղյուսներով գործված «մոարաղ-քարիով»: Վերանորոգումների ընթացքում «օրոսի» պատուհանները վերացել են և դրանցից ոչ մի հետք չի մնացել: Այս տունը դեռ պատկանում է Նադերի ընտանիքին:

17/ Հովհաննեսի (Նանի Դավիթխանյանի) ապարանքը

Գտնվում է Խաղանի պողոտայի, Հովհաննես Շիրազի փողոցի, Ռամին նրբանցքում: Այս ապարանքը պատկանել է Դավիթխանյան Տոհմի տկն Նանիին: Նա ունեցել է հինգ զավակ՝ Հովհաննես, Կարապետ, Ավետիք, Դշխուհի և Վարդուհի անուններով: Նրա մահից հետո ապարանքը ժառանգեցին նրա զավակները և ապա՝ թոռները՝ Սեդան (Էլիզան)՝ Հովհաննեսի միակ դուստրը (ով, ի դեպ, տողերիս հեղինակի տատն է) և Չարլին՝ Ավետիքի մեծ որդին և նրա եղբայրը՝ Ալբերտը: Այդ ժամանակ նոր շինանյութերով վերանորոգումներ են կատարվել: Այնուհետև ապարանքը ժառանգեց Ալբերտի կինը՝ Մանուշ Կարապետյանը, և Էլիզա Դավիթխանյա-

նի զավակները: Տունը գրանցվել է Մշակութային ժառանգության պահպանման ցանկում, սակայն ինչ-որ նախապայմաններով այն վաճառվել է: Տողերիս հեղինակի կատարած ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ այս տունը 2014թ. կատարելապես վերանորոգվել է և որոշված է մոտ ապագայում շահագործման հանձնել որպես ավանդական ճաշարան: Դահլիճը կառուցված է «թաղ-վա-թավիզեով»: Դահլիճի նկարչությունները վերանորոգման ժամանակ ավելացվել են: Տունը քառակուսի բակ ունի, որը ձգված է տան երկայնքով:

18/ Լևոն Մինասյանի ապարանքը

Տունը կառուցվել է Ղաջարների իշխանության վերջերին, Չարսուղ Թաղում: Թեև այս ապարանքը չի կարելի արդիական համարել, բայց և, անկասկած, այն կարելի է Իրանի արդիականացման սկզբնավորման ժամանակաշրջանին պատկանող առաջին շենքերից մեկը համարել: Հատկանշական է, որ ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների հետևանքով շինությունը լիովին կորցրել է իր սկզբնական կառուցվածքը

19/ Գարեգին Հանանյանի ապարանքը

Այս ապարանքը, որը պատկանում էր Գարեգին Հանանյանին (նախկին անունը՝ Կարապետ Կիրակոսյան), 2005թ. վաճառվեց Հոմայուն Աֆհամին: Նա այս տնից մնացած հին մասերը վերանորոգեց, իսկ փլված մասերի տարածքում նոր շենք կառուցեց: Ապարանքը գտնվում է Հաքիմ Նեզամի պողոտայի, Սանգթարաշհա պողոտայի Զեյթուն փողոցում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՊԱՐԱՆՔՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐՈՎ

Ուսումնասիրելով ապարանքների հայկական և իրանական ակունքները, աշխատանքի այս մասում կատարվել են գլխավոր եզրակացությունները:

Հայաստանի ապարանքները մեծ մասամբ քարաշեն են: Որպես շինանյութ օգտագործվում է տուֆ տեսակի քարը, որը զանազան գույներով առատորեն գտնվում է Հայաստանի տարածքում: Տուֆը համեմատաբար ամուր չէ և հեշտությամբ կարելի է այն տաշել ու ցանկացած ձևը տալ, բայց դիմացկուն է տեղի կլիմայական պայմաններին: Շենքի հիմքը կառուցելու համար հաճախ բազալտ քարից են օգտվել: Առաստաղը սովորաբար կամարաձև թաղածածկ է եղել, իսկ լուսամուտները նեղ անցքերի ձևով, որը համապատասխանում է տեղի ցուրտ կլիմայական պայմաններին և, միաժամանակ, բնական լույսով լուսավորում ներքին տարածքը: 6-րդ դարից հետո առանց երկնասլաց գմբեթի կառույց պատկերացնելն անգամ անհնար էր: Այս ժամանակաշրջանում կառուցապատումը կատարվում էր կենտրոնական պլանի ձևով: Հատկանշական է, որ տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական իրադարձություններն ուղղակիորեն ազդում էին ճարտարապետության զարգացման վրա: Ժամանակի ընթացքում կառուցվածքային շարունակական փոփոխությունների արդյունքում դեպի գագաթը ձգվող գմբեթի հատվածն ավելի սլացիկ ու բարձր դարձավ, իսկ նրա հենասյուները՝ առավել ամրակուռ: Նոր Ջուղայի ճարտարապետությունն ազդվել է Իրանի ճարտարապետության

կտրվածքից և Հայաստանի ճարտարապետության պլանից: Այդ երկուսի օգտագործումն այն հնարքն է, որ զատում է Նոր Ջուղայի ճարտարապետությունը:

Ապարանքները մեծ մասամբ կառուցվում էին քառակուսի, օգտագործված շինանյութը հիմնականում քարն էր, սակայն կան նաև աղյուսաշեն ապարանքներ: Ընդհանրապես, ապարանքներն ունենում էին մեկ կամ երկու հարկ: Ճակատը բաժանվում էր հավասար մասերի, և նրանց միջև հորիզոնական լարակաժ էին անցկացնում: Սա կառուցվածքային դեր ուներ: Այս ապարանքների ճարտարապետության անբաժանելի մասն էին կազմում արտաքին պատշգամբները, որոնց կառուցվածքն այնպիսին էր, որ ծածկվելու դեպքում տան ինտերիերի մաս էին կազմում: Այսպիսով, անհրաժեշտության դեպքում տան ներքին ճարտարապետական միջավայրը մեծանում էր: Նկատի ունենալով տեղի ցուրտ ու տեղումներով հարուստ կլիման, ապարանքների տանիքը թեքությամբ էին կառուցում: Այս թեք տանիքը կառուցելու համար նախ տան կրող պատերի վրա տեղադրում էին հարթ ու փայտյա առաստաղը և հետո միայն վրան կառուցում ձեղունը: Ձեղնահարկային սենյակը պահեստի դեր էր խաղում: Տան ներքին միջավայրը, հենց մուտքից սկսած, ֆունկցիոնալ կառուցվածք ուներ, և տարածքային մասնատումները հեռատեսորեն այնպես էին կատարվում, որ հեշտությամբ կարելի էր ձևափոխություն կատարել և նույնիսկ նոր տարածքներ ավելացնել շենքին: Այս ֆունկցիոնալ հայացքով, բնականաբար, հատակագիծն ու ճակատը սիմետրիկ կառույց չունեն: Տան ինտերիերը զուրկ է ամենայն հարդարանքից: Հատկանշական է, որ սենյակները տարածքային առումով համարժեք էին: Շենքի դրսից անմիջապես տան ներքին տարածք մտնել հնարավոր չէր, քանի որ սկզբում գտնվում էր մի փոքրիկ սենյակ՝ որպես կապող օղակ:

XIX-XX դդ. անցումային տասնամյակների մոդեռնիստական շարժումը նախ՝ Եվրոպայում և ապա՝ Միջին Ասիայում մեծ փոփոխություններ առաջացրեց: Բնականաբար, Իրանը ևս բացառություն չկազմեց, և մոդեռնիզմը այստեղ ևս մեծ հեղաշրջում ու վերափոխում առաջացրեց: Աշխատանքի նախորդ գլուխներում խոսվել է այն մասին, որ եվրոպացիներն Իրանում մեծ ազդեցություն ունեցան 17-րդ դարում՝ Սեֆյանների թագավորության օրոք: Բնականաբար, առաջինն առևտրականներն ու արհեստավորներն էին, որ մոդեռնիստական այդ ազդեցությունը կրեցին: Հասարակական նոր պահանջների բավարարման նպատակով Նոր Ջուղան աստիճանաբար փոխվում էր: Այդ փոփոխությունները կարելի է երկու խմբի բաժանել: Առաջինը՝ նպատակահարմար փոփոխություններ կարելի է համարել այն կառուցապատումները, որոնք կատարվել են շրջանի բնիկ ճարտարապետությունը նկատի առնելով, իսկ երկրորդ խմբի մեջ կարելի է ներառել այն կառուցապատումները, որոնք, անտեսելով բնիկ ճարտարապետությունը, աղճատել ու աղավաղել են քաղաքի ինքնությունը:

Միջավայրի ուսումնասիրությունը նպաստում է հողատարածքի օգտագործման լավագույն ձևը գտնելու գործին: Նոր Ջուղայի պատմական տներում առկա ծավալատարածական կառուցվածքը կապված է անցյալում տիրող միջավայրի պայմանների հետ: Նկատելի է, որ տան միջավայրը փոփոխվել է, բայց տունն ամբողջությամբ կամ նրա մի մասը նույնությամբ պահպանվել է, ուրեմն կարելի է եզրա-

կացնել, որ տվյալ տունը դեռ կարող է բավարարել մարդու նոր պահանջներին ևս:

Բնակարանի միջավայրային պայմանների ուսումնասիրությունը երեք մասի կարելի է բաժանել.

Առաջին՝ տան գտնվելու վայրի՝ հողամասի առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Այս բաժնում ճշտվում են շինհրապարակի սահմանագծերը և/կամ հողամասի տարածության չափսերը և տոպոգրաֆիական պատկերը՝ թեքայնությունը (ռելիեֆը):

Երկրորդ՝ տան միջավայրի, արտաքին մուտքերի, ուղիների, ձեռնահասության, բարձրությունների և կառույցի ու շինանյութերի ուսումնասիրությունը:

Երրորդ՝ Տան հաղորդակցության ու կապի ուսումնասիրությունն է քաղաքի մասշտաբով: Այս բաժնում ուսումնասիրվում է քաղաքի ինքնությունը և բնակչության կազմությունն ու տները, կլիմայական պայմանները և կանաչապատ տարածությունը:

Նոր Ջուղայի ճարտարապետությունը կառուցողական եղանակների մեծ փորձ ունի: Յուրաքանչյուր շենքում երևում է հնարամտության արտացոլանքը: Սակայն ակնհայտ է, որ բոլոր պարագաներում զգուշորեն հետևում են ավանդական ճարտարապետության կանոններին: Շենքի բացվածքների համեմատական չափերն ու ձևը, շենքի ընդհանուր բարձրությունների միատարրությունը և օգտագործված գույները՝ բոլորը ավանդական ճարտարապետական համակարգին հետևելու արդյունքն են: Այսպիսով՝ անցյալից մեզ ժառանգություն մնացած տները կարող են մեծ դեր ունենալ ավանդական ճարտարապետության ուսումնասիրության գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոր Ջուղան Սպահան քաղաքի բաղկացուցիչ արվարձանն էր: Հիմնականում հայաբնակ լինելով, այստեղ բնակվում էին այլ ժողովուրդների ներկայացուցիչներ ևս: Ներդաշնակ հարաբերությունների արդյունքում բնակավայրում ստեղծվեց միաձույլ մշակույթ, որն առանձնահատուկ է իր երկխոսությամբ և հատկապես արտահայտվել է բնակելի տների և մեծատուն խոջայական ապարանքների ճարտարապետության մեջ որպես գաղթավայրային ճարտարապետության վառ դրսևորում:

Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության առանձնահատկությունները կարելի է խարսխել երեք սկզբունքների վրա: Դրանք են՝ ֆունկցիոնալ հարմարավետությունը, բովանդակ ձևերի հորինվածքային պարզությունը և նրանցում արտահայտված զանազան մշակույթների երկխոսությունը:

Նոր Ջուղայի ապարանքների բովանդակության հարմարավետությունը բխում էր բնակալիմայական պայմաններից, ապարանքներում տեղի ունեցող կյանքի ու ազգային կենցաղի ներդաշնակեցումից: Այդ թվում են՝ բակերի տարածումը, ներքին և արտաքին տարածությունների փոխադարձ մեկուսացումն ու միաձուլման հնարավորությունները, օդափոխության ու բնական լուսավորության տեղական միջոցառումների ադապտացումը, շինանյութի ընտրությունը, բացվածքների ձևերի արխիտեկտոնիկան և այլն:

Նոր Ջուղայի ապարանքների ձևերի պարզությունը ժողովրդական շինաան-

դույթների միջոցով միասնական կերպարի հասնելու ձգտման արդյունք է: Ոչ այն իմաստով, որ խուսափել են դեկորատիվ տարրերից, այլ դեկորատիվ այդ տարրերն օգտագործվում էին գիտակցաբար ու մտածված՝ ռացիոնալ: Բարդ դեկորատիվ տարրերը կիրառվում էին ճարտարապետական ուտիլիտար մասերում, որը գրավում էր դիտողի ուշադրությունը, ինչը, ի դեպ, հայկական պատմական ճարտարապետության սկզբնաղբյուրներից է:

Այլ մշակույթների նկատմամբ և նրանց հետ ազգային և տեղական երկխոսությունը ջուղայեցիներին վարպետ արհեստավորներ և վաճառականներ էր դարձրել, և հենց այդ բերումով սերտ կապի մեջ էին զանազան ազգությունների հետ: Առևտրի ընթացքում ինքնաբերաբար տեղի էր ունենում նաև մշակութային փոխազդեցություն, ինչը նմանակելու բնույթ չէր կրում: Ջուղայեցիներն ազդվում էին օտարների մշակույթից այնպես, որ ներշնչվելով նրանցից, իրենց հատուկ հնարամտությամբ ու նորարարությամբ արվեստն ու ճարտարապետությունը ներկայացնում էին մի նոր կաղապարի մեջ: Այդ ազդեցությունների մանրակրկիտ արտացոլանքը կարելի է տեսնել Սպահանի, Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության ոճի մեջ՝ որպես հայկական պատմական ժառանգության և իրանականի միացումը:

Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական ոճը վերևում նկարագրված բովանդակությամբ կենսախինդ ձևերով արարված կերպարի ստեղծումն է: Տիպաբանական առումով բակը կազմում է տան կորիզը, որ միահյուսվում է հայկական «երեսբացը» իրանական ինտիմ տնային կյանքի ներփակվածության պայմանների հետ: Հորինվածքային դրվածքով ապարանքները ճակատի, ծավալի միասնական լուծումներ են, որոնք շնչում են տան ներքին և արտաքին տարածություններով: Տվյալ դեպքում ճարտարապետական դետալը մի կողմից՝ հայկական մորֆոլոգիա է, մյուս կողմից՝ հարազատ Սպահանի կոնստրուկտիվ հնարքներին, ինչպես գմբեթների ձևերը, քանդակային ձևերն ու զարդարվեստը, ապարանքների ուրվագիծը, դռների հարդարումը, տանիքի մակերևույթների մշակումը և այլն:

Որքան էլ ընդունված է Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետական ժառանգությունը բնութագրել որպես հայկական և սեֆկյան պարսկական մշակույթի երկխոսություն, կարելի է պնդել, որ Նոր Ջուղայի 18-րդ և 19-րդ դարերի ճարտարապետական զարգացումներում ներմուծվեցին իրանական Աֆշարի, Զանդի և ղաջարական գեղարվեստական նախասիրությունները ևս, որ հատկապես արտահայտվեց ապարանքների ինտերիերային արվեստում ի դեմս «Այնի-բորի» հայելավոր զարդամշակումների, «Օրսի» լուսամուտների, «Մուգարնաս» և «Քաթարա» զարդարվեստի տեսակների և այլն:

Այս դարերում Նոր Ջուղայի արվեստներում կատարվեց անցում դեպի արևմտյան մշակույթը, հանգամանք, որ հատուկ լինելով հայկական գաղթավայրերի նախասիրություններին, Նոր Ջուղայում հատկապես ներմուծվեց ուսումնասիրված ապարանքներից՝ Զովալյանի, Սուքիասի, Պետրոս Ղուլիճանի առանձնատների օրինակներով:

Նոր Ջուղայի ապարանքները միջնադարյան ռացիոնալ լուծումներով ջուղայեցի ժողովրդի արհեստի և արվեստի միահյուսման անկրկնելի օրինակներ են, ինչն

այսօր կարելի է բնութագրել որպես եզակի նմուշ միջազգային վերնակույար (տարածքային) ճարտարապետության մեջ: Այն գաղթավայրերի ճարտարապետության միջազգային նոր դրսևորում է և կարող է արժեքավորվել որպես ներկայիս ռեգիոնալ միջավայրակայուն ճարտարապետության ստեղծման ուղիներից մեկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Լուկաս Ա..,** Սպահանի պատմական տների ճարտարապետությունը և դրանց բնական լուսավորվածության մանրամասները, Երիտասարդ հայ արվեստաբաններրի գիտական յոթերորդ նստաշրջան՝ նվիրված Տիգրան Չուխաճյանի ծննդյան 175-ամյակին (Երևան-Արզական, 19-21 հոկտեմբերի, 2012): Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 124-130:
2. **Լուկաս Ա.,** Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության ոճական առանձնահատկությունները, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջան, նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (Երևան-Արզական, 15-17 նոյեմբերի, 2013): Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 131-136:
3. **Լուկաս Ա.,** Նոր Ջուղայի կառուցապատման և բնակելի ճարտարապետության զարգացման վաղ շրջանը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջան, նվիրվում է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին (Երևան-Արզական, 15-17 նոյեմբերի, 2013): Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 199-204:
4. **Լուկաս Ա.,** Նոր Ջուղայի առանձնատների ճարտարապետական ծավալը փոխած ու զարգացրած հետագա հավելումները, «ԿԱՆԹԵՂ» գիտական հոդվածներ, 2016, № 3 (68), Երևան, «Ասողիկ», 2016, էջ 208-220:
5. **Լուկաս Ա.,** Խորհրդանիշը Նոր Ջուղայի ապարանքների արտաքին մուտքերի ճարտարապետական ձևավորման մեջ, «ԿԱՆԹԵՂ» գիտական հոդվածներ, 2016, № 4 (69), Երևան, «Ասողիկ», 2016, էջ 187-194.
6. **Լուկաս Ա.,** Նոր Ջուղայի առանձնատների ճակատների ճարտարապետական համամասնություններն ու համակարգը, Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջան (Երևան-Արզական, 30 սեպտեմբերի - 2 հոկտեմբերի, 2016), նվիրվում է ՀՀ անկախության 25-ամյակին: Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 107-124:
7. **Լուկաս Ա., Շահբաղյան Մ.,** Կայուն ճարտարապետությունը Նոր Ջուղայի տներում, Շինարարության. Սպահանում ճարտարագիտության, ճարտարապետության և քաղաքային կառավարման ազգային համաժողով, 2018, էջ 132-145
8. **Լուկաս Ա.,** Իսպահանի Նոր Ջուղայի «Քուշկ» տեսակի ապարանքների ճարտարապետական ուսումնասիրությունը, Թավրիզում կայացած Իսլամական երկրների քաղաքացիական շինարարության, ճարտարապետության և քաղաքաշինության գիտաժողով, 2018, էջ 150-164:

ЛУКАС АРМАН КАРОЕВИЧ
АРХИТЕКТУРА ОСОБНЯКОВ НОВОЙ ДЖУЛЬФЫ (XVII – XIX ВЕКА)

Тема исследования: Рассмотрена архитектура особняков Новой Джульфы Исфаханской области. Архитектура Новой Джульфы – это новый стиль, сформированный в поздние средние века в Иране. Являясь примером архитектуры армянской диаспоры, она объединяет определенные армянские национальные элементы и традиционную архитектуру Исфахана. В настоящее время в Новой Джульфе существует множество примеров жилых построек, изучение которых очень важно для иллюстрации архитектуры диаспоры. В данном исследовании особое внимание уделено 25 особнякам. Исследование состоит из 125 страниц и следующих частей: введение, три главы, общие выводы, 70 ссылок на использованные источники и приложение, содержащее 147 рисунков.

Глава 1 относится к географии, включая расположение, граничные зоны и соседствующие с Новой Джульфой области, а также климатические условия, в том числе высоту над уровнем моря, направление ветра, угол и радиацию солнца, которые влияют на архитектуру Исфаханской области. Хронология исследования включает период истории Ирана до Сефевидов, во времена Сефевидов и после Сефевидов от XVI до XVII веков. Соответствующим образом освещается история жилищного строительства в Исфахане и его отношение с традициями Новой Джульфы. При изучении истории формирования Новой Джульфы как жилого поселения на передний план выдвигаются два военных эпизода – оккупация Тебриза Оттоманской Империей во время «Чалдоранской войны», победа шаха Аббаса и освобождение оккупированных территорий. Жилищное строительство в Новой Джульфе и сравнительный анализ градостроительства изучены на основании исследовательских поездок и представленных изысканий на местности. Раскрыты характеристики архитектуры и градостроительства Исфахана, а также взаимосвязь особенностей Исфахана и Новой Джульфы. Новая Джульфа - маленький город, состоящий из 6-7 кварталов и центральной площади, с двумя пересекающимися главными улицами в центре города. В настоящее время Новая Джульфа – один из районов Исфахана, расположенный к югу от реки Заяндеруд, которая отделяет ее от города Исфахан. В старые времена Новая Джульфа располагалась в садах, и земля в этом районе орошалась акведуками. В соответствии с архивными данными, городок был хорошо застроен, а особняки богатых людей, имеющие большую архитектурную ценность, распологались вдоль реки, однако сегодня почти невозможно обнаружить их следы. Однако, некоторые особняки сохранились в центре старых районов сегодняшней Новой Джульфы.

Во 2-ой главе_рассматривается архитектурная документация, касающаяся особняков Новой Джульфы. Особняки разделены на категории разрушенных и существующих в наше время. По всем особнякам, насколько это возможно, представлена история, планировка, фасады и декоративные элементы. Описаны

уникальные характеристики и отличительные особенности каждого особняка. Особняки известны по именам их владельцев, а именно: разрушенные особняки – Эрнеста Хольцера, Вртанеса Абкара, Ага Кемалла, Ходжи Воскана, Есаи и Ало Хана, существующие поныне особняки – Сукиаса, Давида и некоторые другие строения, прилегающие к этому особняку, особняк Марты Питерс, Заволяна, Петроса Вилиджана (который впоследствии был восстановлен Мосре Заде), особняк Степаняна, Аеубиха, Хачика, Григора Мардиросяна, Овсепа, Овсепа Амирханяна, Минаса Крата, Манука Барсега, Симона, Абкара, Мостаджеряна, Варосяна Маркар Надера, Нани Давидханяна, Левона Минасяна, Гарегина Ханаяна.

Глава 3 содержит анализ упомянутых в предыдущей главе фактографированных особняков. Чтобы подчеркнуть существующую взаимосвязь иранской и армянской архитектуры на примерах изучаемых особняков, в диссертацию включен краткий исторический очерк относительно иранской и армянской жилищной архитектуры. Сразу после этого рассмотрена роль окружающей среды и фундаментов зданий в архитектурных формах Новой Джульфы, типы внешних элементов, хашти, дворов, планы, разделение фасадов, фасады служебных помещений, входная часть фасада, планировка, разделение залов и отопительная система. Особое внимание уделено строительным ограничениям и техникам, примененным для особняков Новой Джульфы.

Заключения и выводы сформулированы в следующих пунктах:

1.Наряду с Армянской общиной, которая составляла большинство населения, были также жители других национальностей, которые привносили свой вклад в архитектуру района. Благодаря этому смешению образовался новый архитектурный стиль. 2. Архитектура особняков Новой Джульфы функциональна, проста и выразительна. 3. Элементы, образующие архитектуру Новой Джульфы включают в себя двор, естественную циркуляцию воздуха, естественное освещение, гармонию и материалы. 4. Декоративное оформление особняков Новой Джульфы привлекает внимание зрителя отдельными деталями, которые носят влияние армянской архитектуры. 5. Торговля помогла усовершенствовать архитектурную культуру Новой Джульфы. Архитектура Новой Джульфы вдохновлялась архитектурой других народов, но никогда не подражала им. 6. Формат архитектуры Новой Джульфы – персидский в отношении купола и двора, а армянская архитектура присутствует в контексте. 7. Архитектура Новой Джульфы зародилась в Сефевидский период и далее развивалась во времена династий Афшаров, Зандов и Каджаров. «Могарнас» - художественная декорация под куполом, была создана в эпоху Сефевидов, а «Аинбори» - зеркальное оформление, и «Орси» - проемы, украшенные цветным стеклом, сформировались при Каджарах. 8. Наилучшими образцами архитектуры Новой Джульфы среди сохранившихся особняков являются особняки Сукиаса, Давида, Заволяна, Петроса Вилиджана. 9. Архитектурный стиль Новой Джульфы развивался и широко распространился в некоторых других местах.

ARMAN CARO LUCAS

THE ARCHITECTURE OF NEW JULFA MANSIONS (XVII-XIX centuries)

Thesis of the Study, the study considers New Julfa's mansion architecture from Isfahan area. New Julfa Architecture is a new style formed within the context of the late medieval times in Iran. Being an instance of Armenian Diaspora Architecture it combined certain Armenian national elements with traditional Isfahan architecture. Today there are so many residential examples existing in New Julfa that the study of them is of an important illustration for Diaspora Architecture. This desertation focuses on 25 mansions as general. The study consistes of 125 pages as following parts: Introduction, three chapters, general conclusions, with 70 references and 147 illustrations.

Chapter 1, concisely studies the geography including the location, bondery zones and New Julfas neighborhoods and climatic conditions including the altitude from the sea level ,wind direction and sun angle and its radiation that influence the architecture of Isfahan region. The timeline includes pre- Safavid, Safavid and post Safavid periods of Iranian history from XVI-XVII cc. accordingly clarifies the residential history in Isfahan and its relation to New-Julfa tradition. The history of formation of New Julfa settlement is highlighting two war events which are: occupation of Tabriz by Ottomans during the "Chaldoran war" and Shah Abbas' triumph and emancipating the occupied lands. The residential architecture in New Julfa and comparative study of its town planning compiled from travelers notes and site studies. The connection between Isfahan and New Julfa are explained according to the characteristics of Isfahan's architecture and city-planning. New-Julfa iused to be a town with 6-7 quarters and a down-town square accompanied by two crossing main streets at the center. Nowedays, New Julfa as one of the districts of Isfahan is located in the south of Zayanderud river that divides it from Isfahan city. New Julfa in old days was allocated to gardens, so the texture of the region was adapted as arable land with aquqaducts. According to the data gathered through archives we know the well constructed and the mansions of rich with high architectural value were built along the river but today is almost impossible to trace them. However some mansions remained in the center of the old parts of the existing New Julfa.

Chapter 2, focuses on architectural documentation of New Julfa's Mansions. The mansions are classified into demolished and existing categories. All are explained by their history, plans, façades and decorative elements as much as it was possible. The unique propert ies of each mansion that gives them specific feature is explained. The mansions are known by their owner's names as following.

1/ the demolished mansions are: Ernest Hoeltzer's, Vrtanes Abkar's, Aga Kemall's, Khoja Voskan's, Yasayi's and Olokhan's.

2/ existing mansions are: Sukias's, David's and some other building Adjacent to it, Marta Piters's, Zavolian's, Petros Volijani's (which later regenerated by Moshref Zadeh's mansion), Stapanian's, Ayoobiha's, Khachik's, Grigor Mardirosian's, Hovsap's , Hovsap Amir-Khanian's, Minas krat's, Manook Barsegh's, Simon's, Abkar's, Mostajarian's, Varsin Markar Nader's, Garegin Hanaian's, Nani Davidkhanian's.

Chapter 3, Analyses the documented mansions mentioned in the former chapter. To illustrate the existing link between the Armenian and Iranian architecture based on the examples of the above mentioned studies, an overview of the Iranian and Armenian residential architecture is presented. Right after considering the role of the environmental and building bases for the architectural forms of New Jugha, the typological elements, such Hashti, Yard, Plan Circulation Chart, Façade Dividers, Service Rooms Facade, Facade Entrance Part, Hall Plan, Hall Section and Heatting System were observed. Particular attention is paid to the building construction and techniques used in New Julfa's mansions.

Conclusion can be explained in the fallowing points:

1. Among the Armenian community that formed the majority of the population there were people with other ethnicities. These people brought their taste and contribution to the architecture of the region so through these melting pot a new style of architecture was born. 2. The architecture of New Julfa's mansions of is functional, simple and impressive. 3.The Elements that forms the New Julfa's architecture arethe application of courtyard, natural air circulation, natural lighting, harmony and materials 4., The ornamentation of New Julfa's mansions is in such that easily can draw the attention of the observer to a specific spot due to the influence of Armenian architecture. 5. Trade made an open door for enhancing the architectural culture of New Julfa. The architecture of New Julfa inspired with the architecture of other nations but never imitate them solely. 6. The format of the Julfa's architecture is Persian because of dome and courtyard while the Armenian architecture is present in the context. 7. The New Julfa's architecture has started in safavid period and later faced with Afshar, Zand and Qajar dynasties. "Mogarnas", the artistic decoration under the dome, established under Safavids but "Aine bori", miror art work, and "Orsi", colored glass openings, are formed under Qajars. 8. From among the existing mansions, the best representator of New Julfa's architecture are Sukias', David's, Zavolian's, Khaje Petros Volijani's mansions. 9. Julfa's architectural style grew and spread widely to some other places.